Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 14-ի N 2196-Ն որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՆԵԼՈՒ

1. Հուշարձանների պետական ցուցակում պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանի ընդգրկումը կատարվում է փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա անկախ դրա էթնիկական (ազգային) ու կրոնական պատկանելիությունից, եթե հայտնաբերված կամ առաջարկվող նոր օբյեկտն ունի իր ստեղծման պահից առնվազն 30 տարվա վաղեմություն և համապատասխանում է հետևյալ չափորոշիչներից առնվազն մեկին՝

1) հանդիսանում է մարդու ստեղծագործական հանճարի դրսևորում.

2) նախապատմական, պատմական փուլերի ու անհետացած քաղաքակրթությունների գոյությունը փաստող վկայություն, մշակույթների ձևավորման և զարգացման մասին տվյալներ պարունակող սկզբնաղբյուր (հնագույն կայանատեղիներ, բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, ճարտարապետական, ճարտարագիտական կառույցներ և այլն).

3) մարդու կողմից օգտագործված կամ ստեղծված կենսապահովման միջավայրի, բնական միջավայրի և կենսառեսուրսների օգտագործման արժեքավոր օրինակ կամ դրսևորում.

4) պատմական վաղագույն փուլերում ստեղծված ժայռապատկերների, պատկերագրերի, գաղափարագրերի արժեքավոր օրինակ.

5) պատմական, հիշարժան, կարևորագույն իրադարձությունների և գործընթացների վիմագիր (անշարժ) վկայություն.

6) ստեղծագործական, կոնստրուկտիվ կամ գիտատեխնիկական փորձարարության ինքնատիպ կամ աննախադեպ արդյունք.

7) անմիջականորեն կապված է մարդկության, տարածաշրջանի կամ ազգային պատմության վրա նշանակալից ազդեցություն թողած իրադարձությունների, գաղափարների և համոզմունքների, գրականության և արվեստի ստեղծագործությունների, ականավոր անձանց կյանքի ու գործունեության, ժողովրդական ավանդույթների, ավանդապատումների, հավատալիքների հետ.

8) ազգային-ազատագրական պայքարի կամ պատերազմի կամ զինված ընդհարումների ժամանակ զոհվածների կամ մասսայական բռնությունների զոհերի հիշատակը հավերժացնող հավաքական կոթող.

9) նոր և նորագույն ժամանակաշրջանի (19-րդ դարից սկսած) պատմագեղարվեստական, ճարտարապետական որակները փաստող քաղաքաշինական կամ պատմական հատակագծման և կառուցապատման հատված կամ ճարտարապետական առանձնահատկությունները, ոճը, տիպը բնութագրող առանձին կառույցներ կամ անվանի ճարտարապետների ստեղծագործության արժեքավոր օրինակ.

10) մոնումենտալ արվեստի արժեքավոր ստեղծագործություն (որմնանկար, խճանկար, արձան, քանդակ և այլն):

2. Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված հուշարձանը կարող է հանվել Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակից լիազորված մարմնին կից գործող փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, եթե հուշարձանը՝

1) ոչնչացվել, ավերվել կամ անհետացել է բնական տարերային աղետների կամ չնախատեսված իրավիճակների (մարդու կենսագործունեության հետևանք) պատճառով և ենթակա չէ գիտականորեն հիմնավորված վերականգնման.

2) կորցրել է իր պատմամշակութային ու գիտական արժեքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ